ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԵՎԳԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Բնակչության սոցիալական պաշտպանությունն» այն հասկացություններից է, որի մեկնաբանության հարցում գիտական հանրույթում ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Նախորդ դարի 30-ական թվականներին շրջանառության մեջ մտած այս հասկացությունը մինչ օրս չունի սպառիչ և հստակ սահմանում: Դրա հիմնական պատճառն այն է, որ այն գիտական ճյուղերի տարբեր ոլորտներում է կիրառվում, ուստի արժանանում է տարաբնույթ մեկնաբանությունների: Այդ հասկացության մեկնաբանության առաջին փորձերը կատարել են տնտեսագետները, որոնք ի սկզբանե այն կապել են ռիսկային իրավիճակներում բնակչության տարբեր խմբերի եկամուտների ապահովմանն ուղղված միջոցառումների հետ[1]: Դրանցից շատերում կարևորվում են պետության դերը և նրա մասնակցությունը սոցիալական պաշտպանության գործընթացներին:

Կան առաջարկներ «Բնակչության սոցիալական պաշտպանություն» հասկացության սահմանումը մեկնաբանել ավելի լայն իմաստով, այսինքն՝ սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, հաղթահարմանը կամ դրանց հետևանքների մեղմացմանը միտված միջոցառումների ամբողջություն, որոնք իրականացնում են սոցիալական համապատասխան ինստիտուտները, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական նախաձեռնությունները[2]: Նման ռիսկերից են այնպիսի գործոնները, որոնք սպառնում են ողջ բնակչության կամ առանձին խմբերի բնականոն կենսագործունեությանը[3], օրինակ՝ աղքատությունը, գործազրկությունը, անաշխատունակությունը կամ աշխատունակության սահմանափակումները, աշխատողների իրավունքների ոտնահարման դեպքերը և այլն: Ժամանակակից հասարակություններում այս ռիսկերին զուգահեռ տեղ են գտնում նաև բնակչության ծերացմամբ, կանանց զբաղվածության և ընտանիքի կայունության պահպանման խնդիրներով, գլոբալացման հետևանքներով և այլ հանգա-

[1] Տե՛ս **Абакумова Н.** Политика доходов и заработной платы.: М., ИНФРА-М, 1999, էջ 84:

[2] Տե՛ս **Yemtsov R.** The World Bank and Social Protection Overview. http://www. worldbank.org/content/dam/Worldbank/Event/safetynets/1.%20Yemtsov%20_Overview_SSN%20Course_2013.pdf 23.03.2017, ժամը՝ 13:15:

[3] Տե՛ս **Crouch C**. Governing Social Risks in Post-Crisis Europe. Cheltenham, Elgar Publishing Limited, 2015, էջ 12:

մանքներով պայմանավորված իրավիճակներ:

Նեղ իմաստով բնակչության սոցիալական պաշտպանությունը նույնացվում է սոցիալական աջակցությանը՝ խոցելի խմբերին մատուցվող ծառայություններին, որոնց հիմնական նպատակն է աղքատության կրճատումը և անապահով ընտանիքների սոցիալական կարիքների բավարարումը[4]: Այս դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հիմնական պատասխանատուն համարվում են պետությունը և հանրային իշխանության այլ մարմիններ:

Խնդրո առարկա հասկացության ստույգ մեկնաբանության փնտրտուքի ճանապարհին չենք կարող շրջանցել այնպիսի հարակից հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ՝ *սոցիալական պետությունը, բարեկեցության պետությունը, սոցիալական անվտանգությունը և սոցիալական քաղաքականությունը*:

«Սոցիալական պետություն» եզրույթը դեռևս 19-րդ դարում ներկայացրել է գերմանացի իրավագետ և քաղաքական գործիչ *Լորենց ֆոն Շտեյնը*: Ըստ նրա՝ պետությունը պարտավոր է անհրաժեշտ ուշադրություն դարձնել սոցիալական հիմնախնդիրներին, քանի որ նրա հիմնական նպատակը պետք է լինի հասարակության անդամների բարեկեցության ապահովումը և, այսպես կոչված, սոցիալական հիմնահարցի լուծումը, այսինքն՝ դասակարգային պայքարի մեղմացումը և հասարակական բարիքների համաչափ բաշխումը[5]: Սոցիալական պետությունն իր հիմնական գործառույթները իրականացնում է ոչ թե դասակարգային կառուցվածքը փոխելու կամ մի դասակարգը մյուսի շահերին ենթարկելու միջոցով, այլ սոցիալական շարժունությունն ապահովելու և դասակարգային տարբերություններն ու հակասությունները մեղմելու ճանապարհով:

Ըստ Շտեյնի՝ եթե պետությունն ընտրում է սոցիալական առաջնահերթության ուղին, ապա դա նրա համար դառնում է պարտադիր սկզբունք, այսինքն՝ սոցիալական պետությունը պարտավորվում է իրավական ու գործնական հավասարություն ապահովել իր բոլոր քաղաքացիների համար և անհրաժեշտ պայմաններ ստեղծել նրանց սոցիալական իրավունքների իրացման ուղղությամբ: Եթե անգամ որևէ ժամանակահատվածում կամ որոշակի պայմանների առկայության դեպքում պետությունն ի զորու չէ իրագործելու իր հիմնական պարտավորությունները, ապա դա նրան չի ազատում պատասխանատվությունից, քանի որ դրանց շարունակական չիրագործումը պետության ներսում հանգեցնում է հասարակական հուզումների կամ նույնիսկ քաղաքացիական պատերազմների:

Գրեթե բոլոր պետություններն էլ պատմական տարբեր ժամանա-

---

[4] Տե՛ս **Yemtsov R.**, նշվ. աշխ.:

[5] Տե՛ս **Кочеткова Л.** Теория социального государства Лоренца фон Штейна // Философия и общество. № 3 (51)/2008. Волгоград, изд.во «Учитель», 2008, էջ 70:

կահատվածներում կարևորել են սոցիալական բնույթի գործառույթների իրականացումը, սակայն դա չի նշանակում, որ դրանք եղել են սոցիալական պետություններ, այլ դարձել են այդպիսին զարգացման որոշակի փուլում, երբ դասակարգային պայքարի սրման պայմաններում ստիպված են եղել արձագանքել այդ խնդիրներին և սկսել են պետական սոցիալական աջակցություն տրամադրել ոչ թե բարի կամքից ելնելով, այլ որովհետև դա քաղաքացիների իրավունքն է:

Բարեկեցության պետության գաղափարները դեռ 1870 թվականին քննարկվել են գերմանացի քաղաքական գործիչ Օտտո Բիսմարկի աշխատություններում, որտեղ նա կարևորում էր պետության կողմից ստեղծված և ֆինանսավորվող սոցիալական ծրագրերի ու ծառայությունների դերը բնակչությանը տրամադրվող սոցիալական աջակցության մեջ: Հետագայում, իսկ ավելի ստույգ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, անգլիացի արքեպիսկոպոս Ուիլիամ Թեմփլը ներմուծեց «բարեկեցության պետություն» եզրույթը, որը ներկայումս ընկալվում է որպես այնպիսի գաղափար, համաձայն որի՝ պետությունն ունի առաջնային ու որոշիչ դեր հասարակության տնտեսական ոլորտի զարգացման և բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում[6]: Փոլ Սփիքերը բարեկեցության պետության գաղափարը բնութագրելու համար նշում է, որ դա *սոցիալական պետության իդեալական տիպ է, մոդել*, որի դեպքում պետությունը ստանձնում և իրականացնում է քաղաքացիների բարեկեցության ապահովման ու սոցիալական պաշտպանության հիմնական պատասխանատվությունը[7]: Իսկ Ասա Բրիգսը ներկայացնում է բարեկեցության պետության գործառման հետևյալ երեք ուղղությունները՝ 1. սոցիալական ռիսկերի կառավարում և բնակչության առանձին խմբերի կենսագործունեության վրա դրանց բացասական ազդեցության նվազեցում, 2. սոցիալական անհրաժեշտ երաշխիքների տրամադրում բոլոր քաղաքացիներին, 3. բնակչության բոլոր խմբերի ներկայացուցիչների համար քաղաքացիական ակտիվ գործառման մեկնարկային հավասար պայմանների ապահովում[8]:

Քանի որ ժամանակակից բոլոր պետություններն ունեն սոցիալական հիմնախնդիրների լուծման գործառույթ և օրենսդրորեն ստանձնել են այդ պարտականությունը, որն իրականացնում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի միջոցով, ապա կարող ենք վստահորեն պնդել, որ դրանք սոցիալական պետություններ են, սակայն այդպիսին լինելով հանդերձ՝ դժվար է դրանք բնութագրել որպես բարեկեցության պետություններ, քանի որ դրանցից ոչ մեկը չի կարո-

---

[6] Տե՛ս **Dolgoff R., Feldstein D.** Understanding Social Welfare, Harper & Row Publishers, New York, 2003, էջ 12:

[7] Տե՛ս **Spicker P.** The Welfare State: General Theory, USA, Sage Publication, 2000, էջ 66:

[8] Տե՛ս **Midgley J.** Social Welfare in Global Context, Sage Publications, London, 1997, էջ 51:

դանում ամբողջ ծավալով ապահովել բնակչության բոլոր խմբերի բարեկեցության բարձր մակարդակ կամ սոցիալական իրավունքների լիարժեք իրացում: Տարբեր պետություններ բարեկեցության պետության խնդիրների լուծման տարբեր մակարդակներ ունեն: Որոշ պետություններ կարողանում են այդ խնդիրն ավելի լավ լուծել, ինչպես, օրինակ, սկանդինավյան կամ անգլոսաքսոնական երկրները, իսկ մի մասը՝ ոչ այնքան, ինչպես օրինակ աֆրիկյան կամ ասիական բազմաթիվ երկրներ:

«Սոցիալական անվտանգությունը» մեկ այլ հասկացություն է, որը սերտորեն առնչվում է բնակչության սոցիալական պաշտպանությանը: Սոցիալական անվտանգության մեկնաբանությանը վերաբերող մոտեցումները դա դիտարկում են սոցիալական ռիսկերից պաշտպանության, անձնական անվտանգության, տնտեսական, քաղաքական, սոցիալական կայունության համատեքստում[9], իսկ նպատակները պայմանավորում հասարակության սոցիալական ոլորտի կայուն զարգացմամբ, ներդաշնակ հարաբերությունների ապահովմամբ[10]: Սոցիալական անվտանգությունը ենթադրում է անձի, սոցիալական խմբերի, հասարակության կենսական կարևոր շահերի պաշտպանվածություն արտաքին ու ներքին ռիսկերից և նրանց հիմնարար իրավունքների իրացում ցանկացած պայմաններում[11]:

Մասնագիտական գրականության մեջ ձևավորված՝ բավականին տարբեր և բազմաբնույթ մեկնաբանությունների ընդհանրությունն այն է, որ բոլորը սոցիալական անվտանգությունը ներկայացնում են որպես ավելի ընդգրկուն համակարգ, որը ներառում է բնակչության սոցիալական պաշտպանությունը: Վերջինս համարվում է սոցիալական անվտանգության ենթահամակարգերից մեկը, որի գործառումն ուղղված է բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը, սոցիալական ռիսկերից նրանց պաշտպանելուն:

Սոցիալական քաղաքականության և բնակչության սոցիալական պաշտպանության միջև կապը նույնպես անքակտելի է, սակայն վերջնականապես չհստակեցված: Այդ մասին է վկայում այն, որ սոցիալական քաղաքականությունը, համարվելով հասարակության սոցիալական հիմնախնդիրների լուծման կոլեկտիվ ռազմավարություն[12], մի դեպքում դիտվում է որպես բնակչության սոցիալական պաշտպանության իրագործման մեխանիզմ, մյուս դեպքում՝ պետության ներքին քա-

---

[9] Տե՛ս **Лига М.** Социальная безопасность и качество жизни: концептуальный анализ// Ученые записки ЗабГУ. Чита, Забайкальский государственный университет, 2013, էջ 170-171:

[10] Տե՛ս **Костина Е.** Социальное благополучие и социальная безопасность в условиях глобализации современного общества // UNIVERSUM: Общественные науки, 2015. № 6. Владивосток, Дальневосточный федеральный университет, 2015, էջ 5:

[11] Տե՛ս **Левашов В.К.** Глобализация и социальная безопасность, 2002, էջ 24: http:// ecsocman.hse.ru/data/993/662/1216/003.LEVASHOV.pdf 23.05.2018, ժամը՝13:45:

[12] Տե՛ս «Социальная работа: теория и практика» / ред. Арутюнян Л., Ер., 1995, էջ 47:

դաքականություն, որի իրագործմանը ծառայում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը: Այդ երկու հասկացությունների միջև կապի մեկնաբանության ընդհանուր մոտեցումների բացակայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ կապի մեկնաբանությունը կախված է այն բանից, թե ով ինչպես է սահմանում այդ հասկացությունները, կամ որ մոտեցման շրջանակներում է դրանք դիտարկում:

Այսպիսով, բնակչության սոցիալական պաշտպանության ժամանակակից մեկնաբանությունները, լինելով բավականին տարբեր, միաժամանակ դրսևորում են ճկունություն՝ հնարավորություն ընձեռելով ուսումնասիրելու և ներկայացնելու մեկնաբանության բազմաթիվ տարբերակներ: Մի դեպքում այն համարվում է հասարակության արձագանքը կամ պատասխան ռեակցիան սոցիալական, տնտեսական և բազմաթիվ այլ ռիսկերին կամ արդեն առկա խնդիրներին[13], մեկ այլ դեպքում դիտվում է սոցիալական համերաշխության դրսևորման ձև, որի միջոցով հասարակությունը, ի դեմս պետության կամ ոչ պետական այլ կառույցների, հստակ պարտավորվածություններ է ստանձնում բոլոր քաղաքացիների հանդեպ՝ ապահովելու հասարակական բարիքներից օգտվելու մատչելիություն և իրացնելու քաղաքացիների հիմնարար իրավունքները[14]:

Սոցիոլոգիան նույնպես առաջարկում է բնակչության սոցիալական պաշտպանության մեկնաբանության մի քանի մոտեցումներ, որոնց շրջանակներում այն կարող է դիտվել և՛ որպես սոցիալական ինստիտուտ, որն ապահովում է հասարակական որոշակի կարիքների բավարարումը, և՛ որպես սոցիալական համակարգ, որը ներհամակարգային հարաբերությունների ու ազդեցությունների ամբողջություն է, և՛ որպես հասարակական ենթահամակարգ, որի գործառումն ուղղված է հասարակության գործունեության որոշակի նպատակների իրագործմանը:

Սոցիոլոգիայում լայն տարածում ստացած համակարգային վերլուծության մոտեցումը հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման նպատակները, խնդիրները, առանձնացնելու կառուցվածքային տարրերը, ուսումնասիրելու դրանց գործառույթները, ներհամակարգային հարաբերությունների բնույթը և այլն:

Այդ մոտեցման շրջանակներում սոցիալական պաշտպանությունը ներկայանում է որպես կառուցվածքային տարրերի, դրանց միջև ձևավորված հարաբերությունների, մշտական փոխազդեցությունների կուռ

---

[13] Տե՛ս **Кузнецов Е., Филатов В.** Особенности социальной защиты населения. Омск, 2010, էջ 4:

[14] Տե՛ս **Нечуйкина Е.** Социальная защита: понятие, категории, терминология. Санкт Петербург: Гос. Университет гражданской авиации, 2005, էջ 148:

համակարգ, որի նպատակային գործառումն ապահովվում է իր ենթահամակարգերի տարբերակված և փոխլրացնող գործառույթների միջոցով: Որպես համակարգի կառուցվածքային տարրեր՝ հանդես են գալիս դրա ենթահամակարգերը, որոնք միավորված են փոխազդեցությունների և հարաբերությունների յուրօրինակ ցանցով, ինչպես նաև գործառական կախվածությամբ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի տարբեր ենթահամակարգեր: Մոտեցումներից մեկի համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգն անհրաժեշտաբար ներառում և գործառում է այնպիսի ենթահամակարգերի միջոցով, ինչպիսիք են.

- սոցիալական աջակցությունը,
- սոցիալական ապահովագրությունը,
- սոցիալական երաշխիքների իրագործմանն ուղղված ենթահամակարգը,
- սոցիալական ծառայությունները:

Սոցիալական աջակցությունը սոցիալական պաշտպանության համակարգի այն ենթահամակարգն է, որը գործառում է բնակչության խոցելի խմբերի (անապահով ընտանիքներ, գործազուրկներ, հաշմանդամություն ունեցողներ, տարեցներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ և այլն) բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ և կենսամակարդակ ապահովելու նպատակով: Տվյալ ենթահամակարգն ուղղված է սոցիալական աջակցություն ցուցաբերելու արդեն իսկ տարաբնույթ ռիսկերի բախված անձանց կամ խմբերին:

Սոցիալական ապահովագրության համակարգը խնդիր ունի նպաստելու բնակչության տարբեր խմբերի հնարավորությունների ընդլայնմանը՝ սոցիալական ռիսկերը արդյունավետորեն դիմագրավելու համար, ինչին հասնում է աշխատանքային եկամտի ժամանակավոր կամ մշտական կորստի փոխհատուցման ճանապարհով: Սոցիալական ապահովագրության ծրագրերից են, օրինակ, կենսաթոշակային ապահովագրությունը, բժշկական ապահովագրությունը և այլն:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը սոցիալական ռիսկերի կանխման գործառույթն իրականացնում է երաշխիքների սահմանման և իրագործման միջոցով: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է առանձնացնել այդպիսի երաշխիքների և դրանցից բխող միջոցառումների հետևյալ տեսակները՝ *ապահովագրող, պաշտպանիչ, նախաձեռնողական*[15]: Ապահովագրող միջոցառումներն ուղղված են ստեղծելու բնակչության տարբեր խմբերի զբաղ-

[15] Տե՛ս **Воронцова М., Макаров В.** Социальная защита и социальное обслуживание населения. Таганрог, 2015, էջ 13:

վածության և բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ և երաշխավորելու նրանց նվազագույն բավարար կենսամակարդակ սոցիալական ռիսկերի կամ ճգնաժամերի առաջացման դեպքում: Այդպիսի միջոցառումներից են, օրինակ, նվազագույն աշխատավարձի օրենսդրական սահմանումը, ժամանակավոր անաշխատունակության նպաստների տրամադրումը և այլն:

Պաշտպանիչ միջոցառումների խնդիրը բնակչության՝ կյանքի դժվար իրավիճակներում հայտնված կամ նման վտանգի տակ գտնվող խմբերի բավարար կենսամակարդակի երաշխավորումն է, որը ենթադրում է առնվազն կենսական պահանջմունքների բավարարման հնարավորությունների տրամադրում: Նման միջոցառումների շարքին են դասվում անապահով ընտանիքներին և անձանց տրամադրվող ծառայությունները, սոցիալական աջակցության տարբեր ձևերը և այլն:

Նախաձեռնողական միջոցառումների մեջ ընդգրկվում է տվյալ երկրի ողջ բնակչությունը, քանի որ դրանք ուղղված են ներանձնային, ներընտանեկան, համայնքային, հասարակական ռեսուրսների խթանման և մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելու միջոցով մարդկային կապիտալի զարգացմանը: Նախաձեռնողական միջոցառումներից են անվճար բուժօգնությունը, կրթական համընդհանուր ծրագրերը և այլն:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգն իր ենթահամակարգերի տարբերակված և փոխլրացնող գործառման միջոցով լուծում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են *սոցիալական ռիսկերի կառավարումը, կանխարգելումը, հաղթահարումը, դրանց ազդեցության նվազեցումը և դրա հետևանքով առաջացած կորուստների փոխհատուցումը*[16]: Այս խնդիրները սոցիալական պաշտպանության համակարգի համապատասխան ենթահամակարգերի համար դառնում են առանձին նպատակներ:

Համապատասխան ենթահամակարգերի գործառման միջոցով ապահովվում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական նպատակի իրագործումը: Իսկ ո՞րն է այդ նպատակը: Այս հարցի շուրջ մասնագիտական գրականության մեջ նույնպես առկա է որոշակի տարակարծություն: Տարբեր գիտնականներ որպես բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական նպատակ նշում են բնակչության կյանքի որակի բարձրացումը, բարեկեցության ապահովումը, հասարակության սոցիալ-տնտեսական շարունակական զարգացումը և այլն: Նման և բազմաթիվ այլ սահմանումների ու մեկնաբանությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական նպատակը բնակչության սոցիալական պաշտ-

[16] Տե՛ս **Кузнецова Е., Филатов В.** Система социальной защиты населения: понятие, принципы и функции. http://www.aup.ru/books/m268/2_1_2.htm 12. 12.2017, ժամը՝ 14:30:

պանվածության ապահովումն է:

«Սոցիալական պաշտպանվածություն» հասկացությունը մեկնաբանվում է որպես մի վիճակ, երբ անձին, բնակչության առանձին խմբերին տրված երաշխիքները և վերապահված իրավունքները շարունակաբար իրացվում են՝ ապահովելով նրանց բնականոն կենսագործունեությունն ու պաշտպանվածությունը սոցիալական ռիսկերի և ճգնաժամերի բացասական ազդեցություններից: Սոցիալական պաշտպանվածությունը վկայում է անձի հիմնարար պահանջմունքների բավարարման, համարժեք գործառման համար անհրաժեշտ պայմանների և նախադրյալների առկայության մասին[17]: Այն նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման արդյունք է, արդյունավետությունը բնորոշող կարևոր ցուցանիշ:

Թեև տարբեր երկրներում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային և գործառութային բնութագրիչները տարբեր են, ներկայումս հստակորեն նկատվում են դրա գործառման որոշակի օրինաչափություններ և միտումներ: Մասնավորապես, ժամանակակից հասարակություններում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառումն ուղղված է ոչ միայն հասարակության այն խմբերին, որոնք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հայտնվել են կենսագործունեության բնականոն ընթացքը խաթարող իրավիճակներում, և որոնք հաղթահարելու համար ունեն արտաքին աջակցության կարիք, այլև բնակչության բոլոր խմբերին, ներառյալ նրանց, ովքեր, թերևս, տվյալ պահին չեն բախվել նման իրավիճակների, սակայն հնարավոր սոցիալական ռիսկերը կանխելու կամ դրանց արդյունավետորեն դիմագրավելու համար ունեն միջամտության անհրաժեշտություն:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի մյուս առանձնահատկությունն այն է, որ բազմաբովանդակ է և որպես գործառույթների իրականացման միջոցներ ներառում է ոչ միայն ու ոչ այնքան դրամական կամ նյութական աջակցության ձևերը, որոնք դասվում են սոցիալական պաշտպանության պասիվ ձևերի շարքին, այլև ենթադրում է բազմաբնույթ միջոցառումների իրագործում, որոնք ուղղված են բնակչության տարբեր խմբերին անհրաժեշտ ծառայություններ մատուցելուն, սոցիալական երաշխիքներ տրամադրելուն, անձնական, խմբային և հասարակական կարողությունները զարգացնելուն:

Բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ առանձնահատկություն է այն, որ թեև համապատասխան միջոցառումների, ծրագրերի, ծառայությունների նախաձեռնողը, կազմակերպիչն ու ի-

[17] Տե՛ս **Морозова Е. А., Шабаев В. А.** Уровень жизни, качество жизни, социальная защищенность-общее и особенное / Вестник Кузбасского государственного технического университета, 2005. Г,В № 6, էջ 107:

բականացնողն առաջին հերթին պետությունն է և պետական համապատասխան մարմինները, սակայն այսօր այդ համակարգում կարեվորվում են նաև այնպիսի կառույցների ընդգրկումն ու ակտիվ դերակատարումը, ինչպիսիք են հասարակական և միջազգային կազմակերպությունները, մասնավոր ձեռնարկությունները, եկեղեցին, տեղական ինքնակառավարման մարմինները: Առաջնային է նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ավանդական համարվող այնպիսի ինստիտուտների գործունեությունը, ինչպիսիք են ընտանիքը և համայնքը:

Այսպիսով, բնակչության սոցիալական պաշտպանության մեկնաբանությունը կախված է այն հանգամանքից, թե որ մոտեցման շրջանակներում ենք դա դիտարկում և ինչ նպատակներ ենք հետապնդում ուսումնասիրելիս:

Բնակչության սոցիալական պաշտպանությունը մեկնաբանելով սոցիոլոգիայում լայն տարածում գտած համակարգային մոտեցման միջոցով՝ առաջարկում ենք այն սահմանել որպես *սոցիալական համակարգ, որի գործառումն ուղղված է մարդու և քաղաքացու՝ օրենսդրորեն ամրագրված սոցիալական երաշխիքների և իրավունքների իրացմանը, ինչպես նաև սոցիալական տարաբնույթ ռիսկերից նրանց պաշտպանվածության ապահովմանը:*

Բանալի բառեր – *բնակչության սոցիալական պաշտպանություն, սոցիալական պետություն, բարեկեցության պետություն, սոցիալական անվտանգություն, սոցիալական քաղաքականություն*

ЕВГИНЕ ВАРДАНЯН – *Об интерпретации понятия “социальная защита населения”.* – В научной литературе сложилось множество подходов к понятию “социальная защита населения”. Все они предлагают различные его определения. Одни считают социальную защиту комплексом мероприятий, направленных на обеспечение стабильных доходов разных групп населения. Другие видят в ней систему регулирования социальных рисков. В научной интерпретации этого понятия также отсутствует единогласие относительно связи социальной защиты населения с примыкающими понятиями: социальное государство, государство благополучия, социальная безопасность и социальная политика.

Статья посвящена обобщению основных определений указанного понятия и его связи со смежными. Кроме того, рассматривается, возможно ли применить метод системного анализа для изучения социальной защиты населения как отдельной социальной системы.

Ключевые слова: *социальная защита населения, социальное государство, государство благосостояния, социальная безопасность, социальная политика*

YEVGINE VARDANYAN – *On the Interpretation of the Concept of “Social Protection of the Population”.* – There are many approaches in scientific literature for interpreting the concept “social protection of the population”. They all suggest many varieties of how to explain it. Some suggest defining the social protection as a complex of procedures directed towards promoting stable profit of the different groups of the

population. Other approaches consider social protection as a system of social risks' regulation.

There is no cumulative opinion also on how the social protection of the population connects with relevant notions like social state, a welfare state, social security, and social policy.

The article discusses those issues. Particularly, it has an aim to generalize the main scientific descriptions and explanations of that concept and to interpret its connections with the notions mentioned above.

The article also describes the opportunities for analyzing social protection by applying system analysis methodologies adopted by sociology.

Key words: *social protection of population, social state, welfare state, social security, social policy*